ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆԸ ՁՈՎԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

16.05.2025թ. **Սևան համայնք, Ձովաբեր բնակավայր**

Ս/թ մայիսի 16-ին՝ ժամը 16:00-ին, Սևան համայնքի Ձովաբեր բնակավայրի մշակույթի տան հանդիսությունների սրահում տեղի ունեցավ <<Մուտքն առանց հեռախոսների>> բազմաֆունկցիոնալ խաղադաշտի վերաբերյալ հանրային քննարկում՝ մասնակցությամբ հայտը ներկայացնողներ՝ Արաքսի Հարությունյանի և Դավիթ Թորոսյանի, Սևան համայնքի ավագանու անդամ՝ Խաչիկ Թորոսյանի և բնակավայրի բնակիչների:

Հանրային քննարկման մասնակիցներին <<Մուտքն առանց հեռախոսների>> բազմաֆունկցիոնալ խաղադաշտի առաջարկի հեղինակ Դավիթ Թորոսյանը ներկայացրեց նախագծի բովանդակությունը և դրա կարևորությունը բնակավայրի համար: Այն կնպաստի երեխաների ֆիզիկական ակտիվությանը և նրանց առօրյան կդարձնի ավելի հագեցած: Հավելեց նաև, որ շինարարական աշխատանքներին ներգրավված կլինեն կամավորներ: Նա քննարկման մասնակիցներին առաջարկեց արտահայտել իրենց կարծիքները:

Մասնակիցներից Սևան համայնքի ավագանու անդամ Խաչիկ Թորոսյանը հայտնեց, որ իրենք պատրաստ են քննարկելու Ձովաբեր բնակավայրի զարգացման հետ կապված բոլոր ծրագրերը և նշեց, որ իսկապես ճիշտ ընտրություն է կատարվել խաղադաշտի տեղադիրքի մասով: Այն գտնվելով Ձովաբեր բնակավայրի կենտրոնական հատվածում կունենա ավելի շատ այցելուներ, որտեղ իրենց հանգիստը կանցկացնեն թե՛ մեծերը և թե՛ երեխաները, որը խթան կհանդիսանա առողջ ապրելակերպի և սպորտի զարգացմանը: Հորդորեց բնակիչներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել քվեարկության փուլում:

Հանրային լսման մասնակիցներից շատերը նշեցին, որ առաջին անգամ են մասնակցում հանրային լսման, և միանշանակ կողմ են Ձովաբեր բնակավայրի զարգացմանն ուղղված ցանկացած ծրագրի, թե՛ այս ձևաչափով և թե՛ համայնքի կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերով: Ուրախ կլինեն, որ նման ծրագրերը շարունակական լինեն :

Ձովաբեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Սամվել Եսայանի կողմից հավանության արժանացավ <<Մուտքն առանց հեռախոսների>> բազմաֆունկցիոնալ խաղադաշտի ծրագիրը և տվեց իր համաձայնությունը վերը նշված տարածքում խաղադաշտի կառուցման համար:

Ձեռնարկող՝

Առաջարկի հեղինակ՝ Դավիթ Թորոսյան

Հայտը ներկայացնող՝ Արաքսի Հարությունյան

Մասնակիցներ՝

Սևան համայնքի ավագանու անդամ՝ Խաչիկ Թորոսյան

Առաջին կարգի մասնագետ՝ Լիաննա Մելքոնյան

Արձանագրող՝

Արաքսի Հարությունյան